**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**
**ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

---

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«07» 02 2022թ. N 06/8983-22

Ձեր ____________

«Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող
Տիրայր Մուրադյանին
/էլ. փոստ՝ tirayrmuradyan@gmail.com/

Հարգելի՛ պարոն Մուրադյան,

ՀՀ քննչական կոմիտեի նախագահին հասցեագրած Ձեր հարցման կապակցությամբ հայտնում եմ, որ «Անիկոմ» ՍՊ ընկերության աշխատակիցների կողմից իրենց կարգադրիչ կամ այլ լիազորություններն այդ կազմակերպության շահերին հակառակ օգտագործելու դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնի վարույթում քննվել է ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 13144015 քրեական գործը:

Հիշյալ քրեական գործի նախաքննության ընթացքում «Անիկոմ» ՍՊ ընկերության տնօրենին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասով և 325-րդ հոդվածի 1-ին մասով:

2016 թվականի ընթացքում սույն քրեական գործին է միացվել «Անիկոմ» ՍՊ ընկերության աշխատակիցների կողմից Երևան քաղաքի մի շարք հասցեներում գտնվող անշարժ գույքերի գնահատման գործընթացում խախտումներ կատարելու վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 214-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 13138016 և 13802715 քրեական գործերը:

2021 թվականի նոյեմբերի 29-ին թիվ 13144015 քրեական գործով որոշում է կայացվել մեղադրյալի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին՝ վերջինիս արարքում հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Հարգանքով՝
պետ, արդարադատության
առաջին դասի խորհրդական Ա.Գևորգյան

ՀԿԳ ավագ քննիչ Ա.Շոխոյան